

ծաբանութիւն ի լոյս բերողի, նաեւ Տեառն Գրիգորի մեծի Վարդապետի, եւ Սրբոյն Երուսաղէմի գերընտիր Պատրիարքի եւ Մարմնաւոր ծընողաց Տանգուցելոց ի Տէր. եւ հոգեւոր որդւոց իմոց ննջեցելոց ի Քրիստոս եւ կենդանեացն իմոց զաւակաց, Յարութիւն եւ Յակօբ տեառն բանի պաշտօնէից եւ այլոց որդեկացս ի Տէր: Որոյ այսմ յիշատակի եւ այլոցն փոխարէն ոչ զայլ ինչ պահանջեմ ի հանգիպողացդ, եթէ ոչ զքաւութիւն հայցել բաղմամեղ անձինս իմոյ առ Տէր միով Հայր մերիւ յիշման: Եւ կանոնիք զայս ինչ ներփակեմ ի վախճան յիշատակարանիս, զի որքան իցեմ կենդանի՝ եղիցի գրքուկս այս ի վայելումն եւ ի զբօսանս ինձ եւ աշակերտաց զաւակաց իմոց հոգեւորաց: Եւ զայս եւս նշովիւք փակեմ առաքելական կարգիս շնորհիւ եւ ասեմ թէ, սլ ոք յիմ աշակերտացս զսա ոչ ծաղկեցուցէ եւ կամ անխնամ թողցէ եւ կամ ի վարչամակի ծուլութեան բարձի թողի արացէ, եւ ընդ ակամբ հայեսցի, հատցէ Աստուած զբաժին նորա յերկրէն կենդանեաց. եւ թէ ոք սիրով դիպեսցի, ընթերցցի, օգտեսցի եւ օգտեցուցէ զայլս եւ կամ ի գաղափարելն զայս յիշատակարանիկս եւս գաղափարեսցէ, խնդրեմ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, զի երկոքումք կենօք յԱստուծոյ սիրեսցի, ի գիրն կենաց անջինջ գրեսցի եւ երանութեան Սրբոց ի վերնում գաւառին արժանի եղիցի. Ամէն:

Գրեցաւ յիշատակարանս յամի Տեառն 1740 թուին. եւ Հայոց ՌՃԶԹ, Յունիսի ամսոյ, ԻԳ. ի կոստանդնու Պօլիս ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնի Մայր Եկեղեցւոյ: ,